ԱՍՏԾՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Աստուածաշնչում գրված է՝ *«Աստված քննում է սրտի մտածումներն ու խորհուրդները: Եվ Նրա առաջ չկա անտեսանելի արարած, այլ ամեն ինչ պարզ ու հստակ է նրա աչքերի առաջ» (Եբր. 4:12-13), «Նրանով ապրում ենք և շարժվում ենք և կանք» (Գործք 17:28):*

Մարդիկ կարող են իրենք իրենց այս հարցը տալ՝ *«Իբրև քրիստոնյա արդյոք ես իմ մեջ զգո՞ւմ եմ Աստծու ներկայությունը»* կամ *«Ի՞նչ է նշանակում ապրել Աստծու ներկայության մեջ»:*

Աստծու ներկայության մեջ ապրել նշանակում է միշտ հիշել, թե Աստված ամեն րոպե և ամեն տեղ մեզ հետ է, տեսնում է թե՛ մթության մեջ, թե՛ ծածուկ տեղերում, քննում մեր գործերը, կարդում մեր գաղտնի խորհուրդներն ու մտադրությունները:

Ովքեր զգում են Աստծու ներկայությունը իրենց մեջ, նրանք հեռու են մնում չար գործերից, որովհետև իբրև մարդիկ ամեն քայլափոխի կարող ենք մեղանչել, քանի որ չենք գիտակցում, թե Աստված մեր մեջն է: *«Ցույց տվեք մի տեղ,-* գրում է Սուրբ Եփրեմ Խուրին,- *ուր Աստված չի կարող ինձ տեսնել, այնտեղ կանեմ այն, ինչ պահանջեք ինձանից»:* Կարելի է մարդկանցից փախչել, բայց Աստծու ամենապոր աչքից խուսափել՝ անկարելի է:

Աստծու հայացքը տարածվում է նաև մեր մտքերի, ծրագրերի ու մեր հոգու խորքում թաքնված ձգտումների վրա: *«Տերը քննում է ամենքի սրտերը և նա գիտի բոլորի մտածումները»,* ասվում է Սուրբ Գրքում. *«Եթե փնտրես նրան, նա կգտնվի քեզ համար. իսկ եթե թողնես նրան, նա քեզ կլքի իսպառ» (Ա Մն. 28:9):*

Աստված Աբրահամին սովորեցրեց այս ճշմարտությունը. *«Ինձ հնազանդ և կատարյալ եղիր» (Ծն. 17:1):* Մենք փորձում ենք լավագույն կերպով կատարել մեր պարտականությունները, երբ զգում ենք, որ մեզ հետևող ու հսկիչ կա: Այսպես է վարվում զինվորը՝ հրամանատարի, աշակերտը՝ ուսուցչի և գավակը՝ հոր հանդեպ:

Կյանքի նպատակը չի կարող մահը լինել: Այսպես մտածում են միայն հավատքից թույլ մարդիկ: Կյանքը մի իրողություն է, որի նպատակը հենց ինքն է: Իմաստունը ճիշտ է, երբ ասում է. *«Աստված մարդուն ստեղծեց անմահության համար»:* Անմահություն նշանակում է կյանքը կյանքի համար: Կյանքը իր բոլոր իրական բարիքներով, իր արդար հաճույքներով, իր ֆիզիքական և հոգեկան վայելքներով, իր երազներով ու տեսիլքներով, իր բոլոր հայտնություններով, խորհուրդներով ու առեղծվածներով և իր ամբողջական արժեքներով: Անմահութեան գաղափարը միացած Աստծու գաղափարի հետ, ոչ թե թմրեցնում է հոգին՝ *«անտեսելու ու նվազեցնելու երկրավոր կյանքի արժեքը»,* այլ էլ ավելի է բարձրացնում այն:

Աստծու գոյությունն ու հոգու անմահությունը ուրանալը առնըվազն անհեթեթություն է: Ուրացումը թուլացնում է ու փչացնում հոգին, իսկ հավատքը այն զորացնում և ազնվացնում է: Ճշմարիտ կրոնը հավատքի վրա հիմնված կյանքն է:

«Հեռավոր երկրներից մեկում ապրում էր տարօրինակ գաղափարներ ունեցող մի թագավոր: Ամեն տեսակ հաճույքներ օգտագործած լինելով նա ցանկություն է

հայտնում տեսնել նաև Աստծուն ու այդ մասին տեղյակ է պահում իր քաղաքացի-ներին: Եվ, որպեսզի կարողանա այն իրագործել, մարդկանց տալիս է ընդամենը երեք օր ժամանակ:

Ոչ մեկը չի համարձակվում այս անհեթեթ ցանկությունը կատարել: Հեռու մի այլ երկրից եկած մի հովիվ ցանկություն է հայտնում թագավորին ցույց տալ, թե ո՞ւր է Աստված: Նա թագավորի հետ պալատից դուրս է գալիս: Ամառ լինելով արևը ուղղակի այրում էր: Հովիվը թագավորին խնդրում է նայել արևին, սակայն նա չի կարողանում, քանի որ արևի ճառագայթները ծակում են նրա աչքերը:

Երբ թագավորը բողոքում է, թե հովվի նպատակը իրեն կուրացնելն է, նա պատասխանում է. «Քավ լիցի: Բայց իմացեք, որ Աստծու բյուրավոր փառքերից փոքրագույնն է միայն այս արևը, որը ձեզ ցույց տվեցի: Դուք, որ նրան անգամ չկարողացաք նայել, ինչպե՞ս պիտի կարողանաք տեսնել Աստծուն, որ միլիոն անգամ ավելի շողշողուն է, քան արևի ճառագայթները: Անկոր են այս աչքերը: Պետք է ունենալ տարբեր աչքեր, որպեսզի հնարավոր լինի Նրան տեսնել»:

Այդքանից հետո թագավորը չի խրատվում և ուզում է իմանալ, թե Աստծու կբաղմունքն ինչ է: Հովիվը խնդրում է նրան, որ հագուստները փոխեն: Երբ հագուստները փոխվում են, թագավորը դառնում է հովիվ, իսկ հովիվը՝ թագավոր. հովիվն ասում է.

«Ճիշտ այն, ինչ որ մենք հիմա արեցինք: Նա մեկին բարձրացնում է և մի ուրիշին խոնարհեցնում, մեկին մերկացնում է, մյուսին շորեր է հագցնում: Մեկին ուրախացնում է, իսկ մյուսին՝ լացացնում»: Ահա այս է Աստծու կբաղմունքը» **և հրամայում է թագավորին գլխատել ու ինքը դառնում է թագավոր:**

Աստվածաշնչում գրված է. *«Քո Տեր Աստծուն մի՛ փորձիր»:*

Առանց հուսահատվելու ապրենք Աստծու ներկայության մեջ ու Նրա կողմից շնորհված այս գեղեցիկ կյանքը, օգտագործելով մեր ամեն մի րոպեն, քայլենք Հիսուսի ճանապարհով, լինենք ապնիվ, մաքուր և բարի գործեր կատարենք: Ամեն: